ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<ՀՀ ԳՆ-ՇՀԱՊՁԲ-15/5-ԱԱՎ-2>>

ք. Երևան <<18>> << 01 >> 2016 թ.

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ա. Կիրակոսյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<Ագրոխիմպրոմ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Գասպարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված պատվաստանյութեր /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի.

3.1.8 Ընտել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմանագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 54 457 208.5 (հիսունչորս միլիոն չորս հարյուր հիսունյոթ հազար երկու հարյուր ութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, եթե սույն Պայմանագրի համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով համապատասխան ֆինանսական միջոցներ են նախատեսվել:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի

արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից եռօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6.6 Ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ Վաճառողը Գնորդին է տրամադրում նաև տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը պայմանով, որ սույն Պայմանագրի շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

Սույն Պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված

ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.10 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N.1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ք. Երևան, Կառավարական N 3 շենք ՀՀ Ֆինանսների Նախարարության աշխատակազմի գործունեության վարչություն Հ/Հ 90001008381 ՀՎՀՀ 02508046 Աշխատակազմի ղեկավար՝ _____ Ա. Կիրակոսյան (ստորագրություն) Կ.Տ	<<Ագրոխիմպրոմ>> ՍՊԸ ք.Ստեփանակերտ, Ադմ. Իսակովի 1ա/20 27/6 Հեռ. 097 29-19-28 «Արդշինինբանկ» ՓԲԸ Հ/Հ 24770 04179310000 ՀՎՀՀ 90031693 Տնօրեն՝ _____ Գ. Գասպարյան (ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 1
<<18>> <<01>> 2016 թ. կնքված
N ՀՀ ԳՆ-ԾՀԱՊՁԲ-15/5-ԱԱՎ-2 ծածկագրով գնման պայմանագրի

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

հ/հ	Միջոցառման կամ ձեռք բերվող ապրանքի անվանումը	Չափի միավորը	Տեխնիկական բնութագիր
2	Անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութեր	դոզա	Խոզերի դասական ժանտախտի նկատմամբ կենդանի, չորացված, պատվաստանյութ: Իրենից ներկայացնում է բաց դեղնավուն կամ կարմրավուն գույնի ծակոտիներով չոր զանգված: Պատվաստանյութը սրվակների մեջ է և յուրաքանչյուր սրվակը պետք է պարունակի 50 կամ 100 դոզա: Յուրաքանչյուր սրվակի վրա պետք է նշված լինի պատվաստանյութի անվանումը, սերիայի համարը և պատրաստման ժամկետը, իսկ սրվակներ պարունակող տուփի վրա՝ պիտակ, որտեղ նշված լինի պատվաստանյութ արտադրող կազմակերպության անվանումը, սրվակների թիվը, սերիայի և վերահսկիչի համարները, պատրաստման ժամկետը և պահպանման պայմանները: Օգտագործման համար մնացորդային ժամկետը պետք է լինի 10 ամսից ոչ պակաս, իսկ պահպանման և փոխադրման ջերմաստիճանը՝ մոտ +2° - +8° C : Ջերմային ցուցիչների առկայությունը պարտադիր է: Պիտակի վրա պետք է նշված լինի <<պետական պատվեր>> բառերը: Պատվաստանյութը պետք է գրանցված լինի Հայաստանի Հանրապետությունում:
3	Անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութեր	դոզա	Կենդանիների, հակասիբիրախտային 55 շտամի կենդանի, թուլացված պատվաստանյութ: Արտաքին տեսքից պատվաստանյութը իրենից ներկայացնում է սպիտակամոխրագույն, միատեռ զանգված, որի պահպանման ընթացքում առաջանում է նստվածք սրվակի հատակում հաբի տեսքով 1-2 սմ.³, կամ հեղուկ 10 կամ 20 մլ. սրվակներում, համապատասխանաբար պարունակում է 50 կամ 100 դոզա ներմաշկային կամ ենթամաշկային ներարկման համար: Օգտագործման համար մնացորդային ժամկետը պետք է լինի 18 ամսից ոչ պակաս: Պատվաստանյութի ջերմաստիճանը պահպանման ժամանակ պետք է լինի մոտ +2°C ոչ ցածր և +15° C ոչ բարձր: Պատվաստանյութով սրվակները պետք է փակված լինեն ամուր մետաղյա խցաններով կամ ապակյա սրվակներով: Յուրաքանչյուր սրվակի վրա պետք է նշված լինի պատվաստանյութի անվանումը, սերիայի համարը և պատրաստման ժամկետը, իսկ սրվակներ պարունակող տուփի վրա՝ պիտակ, որտեղ նշված լինի պատվաստանյութ արտադրող կազմակերպության անվանումը, սրվակների թիվը, սերիայի և

			վերահսկիչի համարները, պատրաստման ժամկետը և պահպանման պայմանները: Ջերմային ցուցիչների առկայությունը պարտադիր է: Պիտակի վրա նշված լինի <<պետական պատվեր>> բառերը: Պատվաստանյութը պետք է գրանցված լինի Հայաստանի Հանրապետությունում:
4	Անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութեր	դոզա	Խոշոր եղջերավոր կենդանիների և գոմեշների պաստերելյոզի նկատմամբ պրեցիպիտացված, ֆորմալինային պատվաստանյութ: Իրենից ներկայացնում է բաց դեղնավուն հեղուկ, նստվածքով սրվակի հատակին: Թափահարելուց հետո նստվածքը լուծվում և վերածվում է սպիտակավուն գույնի միասեռ կախույթահեղուկի: Յուրաքանչյուր սրվակի վրա պետք է նշված լինի պատվաստանյութ արտադրող կազմակերպության անվանումը, սերիայի և վերահսկիչի համարները, պատրաստման և պիտանելիության ժամկետները: Օգտագործման համար մնացորդային ժամկետը պետք է լինի 10 ամսից ոչ պակաս: Պատվաստանյութով սրվակները պետք է լինեն 100մլ. տարողությամբ: Պատվաստանյութի պահպանման և տեղափոխման ջերմաստիճանը պետք է լինի +2 - +15$_0$ C: Ջերմային ցուցիչների առկայությունը պարտադիր է: Պիտակի վրա նշված լինի <<պետական պատվեր>> բառերը: Պատվաստանյութը պետք է գրանցված լինի Հայաստանի Հանրապետությունում:
5	Անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութեր	դոզա	Թռչունների կեղծ ժանտախտ /Նյուքասլ/ "H" շտամի պատվաստանյութ Չոր վիրուս վակցինա, որը արտաքին տեսքից իրենից ներկայացնում է բաց դեղնավուն կամ սպիտակ, թափահարելիս փոշիացող, ֆիզիոլոգիական լուծույթում հեշտ լուծվող փխրուն զանգված: Պատվաստանյութը փաթեթավորվում է սրվակների մեջ և յուրաքանչյուր սրվակը պետք է պարունակի 100 կամ 200 դոզա: Յուրաքանչյուր սրվակի վրա պետք է նշված լինի պատվաստանյութի անվանումը, սերիայի համարը և պատրաստման ժամկետը, իսկ սրվակներ պարունակող տուփի վրա՝ պիտակ, որտեղ նշված լինի պատվաստանյութ արտադրող կազմակերպության անվանումը, սրվակների թիվը, պատվաստանյութի ծավալը սրվակի մեջ, 1մլ-ում /նլժ-50/ վիրուսի չափաբաժինը, սերիայի և վերահսկիչի համարները, պատրաստման ժամկետը և պահպանման պայմանները: Պատվաստանյութի պիտանելիության ժամկետը պետք է լինի 10 ամսից ոչ պակաս: Պահպանումը և տեղափոխումը՝ մութ +4-6 ^{0}C ջերմաստիճանային պայմաններում: Ջերմային ցուցիչների առկայությունը պարտադիր է: Պիտակի վրա նշված լինի <<պետական պատվեր>> բառերը: Պատվաստանյութը պետք է գրանցված լինի Հայաստանի Հանրապետությունում:
6	Անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութեր	դոզա	Խոշոր եղջերավոր կենդանիների և ոչխարների խշխշան պալարի նկատմամբ հիդրոքսիդալյումինային, ֆորմալինային պատվաստանյութ: Սրվակները պետք է լինեն ամուր փակված մետաղյա խցանով: Արտաքնապես պատվաստանյութը դեղին գույնի տարբեր երանգների, գորշասպիտակավուն մանրէային մարմինների նստվածք է, որը թափահարելուց հետո հեշտությամբ լուծվում է: Յուրաքանչյուր սրվակի վրա պետք է նշված լինի պատվաստանյութ արտադրող կազմակերպության անվանումը, սերիայի և վերահսկիչի համարները, պատրաստման և պիտանելիության ժամկետները և ներարկման դոզան:

			Օգտագործման համար մնացորդային ժամկետը պետք է լինի 10 ամսից ոչ պակաս: Պատվաստանյութի սրվակները պետք է լինեն 100 մլ. տարողությամբ: Պատվաստանյութի պահպանման և տեղափոխման ջերմաստիճանը պետք է լինի մութ +2-ից +15° C: Ջերմային ցուցիչների առկայությունը պարտադիր է: Պիտակի վրա նշված լինի <<պետական պատվեր>> բառերը: Պատվաստանյութը պետք է գրանցված լինի Հայաստանի Հանրապետությունում:
Գործարանային փաթեթավորումը պարտադիր է			

ԳՆՈՐԴ

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ք. Երևան, Կառավարական N 3 շենք
ՀՀ Ֆինանսների Նախարարության
աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011008381
ՀՎՀՀ 02508046
Աշխատակազմի ղեկավար՝

________________ Ա. Կիրակոսյան
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<Ագրոխիմպրոմ>> ՍՊԸ
ք.Ստեփանակերտ, Արմ. Իսակովի 1ա/20 27/6
Հեռ. 097 29-19-28
«Արդշինինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 24770 04179310000
ՀՎՀՀ 90031693
Տնօրեն՝

________________ Գ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
<< 18 >> << 01 >> 2016 թ. կնքված
„N ՀՀ ԳՆ-ՇՀԱՊՁԲ-15/5-ԱԱԿ-2 ծածկագրով գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2016 թ. ֆինանսական միջոցների նախատեսման դեպքում				Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	I եռամսյակ 1 10.02.2016 թ.		II եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10
2	Անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութեր	դոզա	14.79	623 150	9 216 388.5			623 150	9 216 388.5
3	Անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութեր	դոզա	13.5	1 285 600	17 355 600			1 285 600	17 355 600
4	Անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութեր	դոզա	88	74 000	6 512 000			74 000	6 512 000
5	Անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութեր	դոզա	1.42	2 155 000	3 060 100			2 155 000	3 060 100
6	Անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութեր	դոզա	13.79	1 328 000	18 313 120			1 328 000	18 313 120
Ընդամենը				X	54 457 208.5	X		X	54 457 208.5

ԳՆՈՐԴ

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ք. Երևան, Կառավարական N 3 շենք
ՀՀ Ֆինանսների Նախարարության
աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011008381
ՀՎՀՀ 02508036
Աշխատակազմի ղեկավար՝
__________ Ա. Կիրակոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

<<Ագրոխիմպրոմ>> ՍՊԸ
ք.Ստեփանակերտ, Արմ. Իսակովի 1ա/20 27/6
Հեռ. 097 29-19-28
«Արդշինինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 24770 04179310000
ՀՎՀՀ 90031693
Տնօրեն՝
__________ Գ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
<< 18>> << 01>> 2016 թ. կնքված
N ՀՀ ԳՆ-ԾՀԱՊՁԲ-15/5-ԱԱՎ-Հ ծածկագրով գնման պայմանագրի

ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ, ընդ որում **Ֆինանսական միջոցների նախատեսման դեպքում**
2-6.	Անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութեր	**Ֆինանսական միջոցների նախատեսման դեպքում 100 % վճարում**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամողական կարգով*

ԳՆՈՐԴ

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ք. Երևան, Կառավարական N 3 շենք
ՀՀ Ֆինանսների Նախարարության
աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011008381
ՀՎՀՀ 02508046
Աշխատակազմի ղեկավար՝
_____ Ա. Կիրակոսյան
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<Ագրոխիմպրոմ>> ՍՊԸ
ք.Ստեփանակերտ, Ադմ. Իսակովի 1՝/20 27/6
Հեռ. 097 29-19-28
«Արդշինինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 24770 04179310000
ՀՎՀՀ 90031693
Տնօրեն՝
_____ Գ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 4
<< 18 >> << 01 >> 2016 թ. կնքված
N ՀՀ ԳՆ-ԾՀԱՊՁԲ-15/5-ԱԱՎ-2 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
<< 13 >> << 01 >> 2016 թ. կնքված
N ՀՀ ԳՆ-ԾՀԱՊՁԲ-15/5-ԱԱՎ-1 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------ -ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	**Ընդունեց** հայտը նախագծած ներկայացուցիչ՝
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
ստորագրություն	ստորագրություն